

կու տան խարասուի, և չեն կոչել ըստ Ռուսաց սովորութեան խարասու—Քազար:

Մեզ այնպէս կ'երևի, որ վերը գրուցածներս բաւական համոզիչ մեկնութիւնք են ֆրոլմանուան թէպէտև մեր նպատակէն դուրս էր ճոխանայր մի թաթար անուան վերայ, քանզի այդոր մէջ չկայ մի հայացի հայեցակէտ, նա մանաւանդ թաթար իշխեցողին կամքը նսեմացուցել է Ս. խաչ հայկական շքեղ անունը, այլ որովհետև մեզ մի պատմական ստուգութիւն երեցաւ այս տուած մեկնութիւննիս, և որովհետև ազգիս երկրորդ հայրենիք եղել են այս տեղուանք յընթաց շատ դարերու, այն պատճառաւ մեզ իբր ստուգութիւն երեցածը կարևոր համարեցանք գրելու առթիւս, վերջ տալ ուզելով հնագիտաց տեղի և անտեղի մեկնութեանց և բացատրութեանց ֆրոլմանուան վերայ: Այլ մեզ դառնա՞մբ խոսելու մի ուրիշ անուան վերայ, որ ըստ մեր կարծեաց, բոլորովին հայկական ունի տիպար, և որոյ ստուգաբանութիւն եւ ցայսօր անյայտ է, այն է կաւա, որոյ վրայ յաջորդ յօդուածով:

Շարայարեղի

## ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

ՅԱՐԵՒՄՈՒՏՍ

(Shu յ'էջ 157)

Վիլֆոուայի ծանօթ երկասիրութիւնքն, նկատմամբ մեր լեզուին և մատենագրութեան, հետեւեալքն են.

1.<sup>o</sup> Արդէն շատ անգամ մեզմէ յիշատակուած արքունի մատենագրանին մէջ գտնուած հայ ձեռագրաց ցուցակը հետեւալ խորագրով. Catalogue des Manuscrits arméniens de la Bibliothèque de Roy; dressé en 1735, par l'abbé de Villefroy.

2.<sup>o</sup> Remarques sur le Catalogue précédent. Idée des manuscrits les plus intéressants.

Այս երկու գրուածք՝ թարգմանուելով ի լատին հրատարակուեցան ի ցանկի գրչագրաց արքունի մատենագրանին. բայց բուն սկզբնագիրն տպագրեցաւ ի Մոնֆորնէ ի բազմահմուտ գիր. որն Bibliotheca bibliothecæ manuscriptorum, ի 1739, Հատոր Բ. յ'էջ 1015—1027. Միւս այլ տպագրութիւն Միլնեի, ի Nouvelle Encyclo-

pédie Théologique. Dictionnaire des Manuscrits, Հատոր Ա. յ'էջ 1120-1240.

3.<sup>o</sup> Discours préliminaire de la notice des Manuscrits arméniens de la Bibl. de Roi. *Թարգմանական (այժմ ազգային) մատենադարանի ի փարիզ.* Ms. p. XIV. *զոր կը յիշատակէ և Գաթրըմէր (ի վարս լռանտի):*

4.<sup>o</sup> Lettre au R. P. \*\* en lui envoyant une traduction en française des cantiques arméniens, composés dans la V.<sup>e</sup> et VI.<sup>e</sup> s. pour la fête de Nativité de S. Jean-Baptiste et du mystère de la présentation de J. Ch. au temple. (*ի* Mémoires de Trévoux, 1735, *յամսթերթն օգոստոսի, յ'էջ 689. Հանդերձ յառաջաբան տեղեկութեամբ զարականաց: Անդ, յ'էջ 1541-62):*

5.<sup>o</sup> Canon de la Nativité de S. Jean Baptiste. *որ է գաղղիական թարգմանութիւն շարականին Արեգականն արդարոքեան:*

6.<sup>o</sup> Récit de martyre de S. Christoffe (= Քրիստափորի վկային), de la famille de Shanaghloûkh, et de ceux qui ont été immolés par le fer avec lui. Tiré du Ménologe arménien. Manuscrit de la Bibl. du Roi. (*Անդ, 1752, յամսթերթն սեպտեմբերի, յ'էջ 2110):*

7.<sup>o</sup> Ոսկեբերանի ներբող ի սուրբ Լուսաւորին, ի հայ թարգմանութենէն փոխադրեալ ի լատին (*Աստուածազարդից արանց սկզբնաւորութեամբ ճառն*), և զետեղեալ ընդ անհարազատ գրուած ըստ սուրբ հայրապետին ի Մոնֆորնէ. (Joannes Chrysostomus, Opp. gr. et lat. cura et studio Bern. de Montfaucon. Parisiis, 1718-38):

8. Ջրպետեանն ի յառաջաբանի Քերականութեանն կ'աւանդէ ըստ վկայութեան Լուսաւորի թէ վիլֆուա հայերէն քերականութիւն մ'ալ յօրինած ըլլայ: Անշուշտ այս երկասիրութիւնն է որ գրութեամբ Լուսաւորի կը պահուի ի մեր մատենադարանի, և որոյ յառաջաբանէն քաղեր ենք իր վարուց և հայ ուսմանց տեղեկութիւնները: Գրուածքիս խորագիրն է De la langue arménienne, հմուտ և հետաքննական ճառով մը մեր լեզուին վրայ, յորմէ հարկ կը սեպենք հետեւեալ տողերը թարգմանելով մէջ բերել, որովք կը տեսնուի այն մեծ սէրն և համարում զոր ունէր մեր ազգին և մատենագրութեան նկատմամբ:

« Գեղեցիկ գալրութեանց համար մեծ նշանակութիւն ունեցող և շայեկանագոյն դիպաց մէջ ամենէն աւելի օգտակար կրնանք համարիլ 1730 ին յարեւելից առ մեզ հասած և յանուն Լուսավիկեայ Ժէ ստացուած յոյն և հայ գրչագրաց հաւաքում մը: Եթէ գրականական ախորժակաց տէր անձինք, որոց զմայլական հաճոյքն է

իմաստունն Յունաստան, նորանոր լոյսեր կը յուսան քաղել ի յոյն գրչագրաց, որովք պիտի օգտուի նաև հասարակութիւնն ընդ-հանրապէս, քանիպատի՜կ յուսոյ առիթ կ'ընծայեն հայ գրչագիրք։ Հինն և նուիրական Յունաստան արդէն լիովի ծանօթ է. իրեն գլխաւոր յիշատակարանք ձեռռնինս են ի վաղուց, և նորանոր գիւտք որ օր ըստ օրէ կրնան յայտնուիլ, տարակոյս չիկայ որ պիտի ծառայեն աւելի լոյս և կենդանութիւն սփռել այն տեղեկութեանց վրայ, զոր հեյլին հմտութեամբ անուանի անձինք՝ երեք հարիւր տարիներէ ի վեր մշակեր և դեռ եւս կը մշակեն յԵւրոպա։

« Հայկական գրչագիրք ընդհակառակն նոր մատենագրական աշխարհ մը կը ներկայացընեն մեզ, ուր եւրոպացի մը տակաւին միւտ գործած չէ, անոր մէջ ամբողջութեամբ ճշտութիւնքը հասարակաց ծանօթացը՝ ելու համար։ Անոնք որ մինչ մեր ատեններն՝ հաստատած են հոն իրենց բնակութիւնն, առաքելական քարոզիչք, նպատակ և վախճան ունենալով ի կրօնից յանձնուած աշխատութիւն և գործ մը, զայն միայն ունեցեր են տեսակէտ. պաշտամանը գործոյն անհամաձայն գտնելով Հայաստանի հնութեանց հիմնովին ուսումնասիրութիւնը, այդ կոչմանէն անդին չեն ուզած անցնիլ։

« Անտարակոյս հաճոյական զարմանք մը պիտի ազդէ երբ գիտցուի որ եթէ ծանօթանալու ամէն արժանաւորութիւնն ունեցող ազգ մը կայ, Հայոց ազգն ու երկիրն է։ Թերեւս անհաւատալի երևնայ լսելը թէ Ասիոյ ամենէն հռչականուն ակադէմիայն եղած է գրեթէ հազար տարուան միջոց, Քրիստոսի 440 թուականէն մինչ յառումն Կոստանդնուպոլսոյ, և որոյ հետեանք եղաւ ուսմանց և գիտութեանց անկումն ոչ միայն ի Յունաստան, այլ նաև ի Հայս։

« Կը համարձակիմ ըսել թէ իններորդ դարէն մինչև յերեքստաններորդն՝ Հայաստան կրնար ուսուցիչ ըլլալ երկրիս մեծագոյն մասին, բովանդակ այն միջոցին ճիսացած ըլլալով այնպիսի հռչակաւոր անձնաւորութեամբք որ հմտացեալք էին ամենայն գիտութեանց. աստուածաբանք, սրբազան ճարտարախօսք, քերթողք, իմաստասէրք, եկեղեցական մատենագիրք, պատմաբանք, աստեղագաշխ, ճարտար թարգմանիչք, հմուտք ասորի, արաբ, պարսիկ և լատին լեզուաց։ Կրնամ իսկ յաւելուլ թէ ոմանք իրենց արդի քերթողաց այնչափ լաւ ի՛մանային հին գաղղիական բարբառը, որ չորեքստասներորդ դարու մեր վիպասանից մէկուն գրուածքը թարգմանեցին հայ չափական ոտիւք։ Սէրը զոր ունեցան Հայք յուսումն գլխաւոր լեզուաց՝ զոր հիմայ իսկ յիշատակեցինք, պէտք է որ նոյն ազգը մեծապէս սիրելի և պատուական ընէ մեզ. վասն զի իրենց իմաստունք թարգմանեցին

ինչ որ ընտիր և օգտակար գտան այն լեզուաց գրականութեան մէջ, զհայրենիսն աւանդապահ ընելով ամենազգի իմաստուն մատենից: Հայաստան մէյմ'որ ծանօթանայ, այնուհետեւ կը բացուին դրուճք արեւելից, և կը յայտնեն մեզ անյուսալի ճոխութիւնս. և եթէ յաջողինք նորանոր գրչագիրք ձեռք բերել, չենք կրնար բացատրել թէ որչափ և որպիսի՝ լոյս պիտի ընդունինք թէ՛ այս գիտնական ազգին և թէ՛ մերձաւոր ժողովրդոց պատմութեան վրայ »: . . . .

9.<sup>0</sup> Ի մատենին The Bible of every Land կ'ընթեռնուճք թէ Վիլֆոուս իր ժամանակին բանասիրաց հետ միախոհութեամբ ձեռք զարկած ըլլայ յամին 1775 ինոր հրատարակութիւն աստուածաշունչ գրոց, օգտուելով հայ թարգմանութենէն ալ. և թէ իբրու նմիշ մը՝ Ամբակումայ մարգարէութեան գիրքը տպագրելով, այդ ձեռնարկ խափանուած ըլլայ: Մենք այդ հրատարակութիւնն ալ տեսած չենք:

\*\*\*

Վիլֆոուսյի աշակերտաց մէջ, որոց աւանդեց զուսումն հայ լեզուիս, գլխաւորներէն մէկն էր Սիմոն — Պետրոս Լուստէ քահանայն, ծնեալ ի Լիոն իբր ի 1729, և ի 1761 ընտրուած ուսուցիչ երբայականի՝ Վիլֆոուսյի կենդանութեան ատեն, և անոր պաշտաման յաջորդութեան իրաւունքով (survivancier), իրեն նման համակրութեամբ և եռանդեամբ լի առ լեզու մեր և մատենագրութիւն, մասնաւոր յանձնարարականաւ պետական անձանց Գաղղիոյ յամի 1785 եկաւ ի վանս սրբոյն Ղազարու ի Վենետիկ, ստացած ուսումը ալ աւելի կատարելագործելու նպատակաւ: Յօրինած էր արդէն հայ և լատին ընդարձակ բառգիրք մը, զոր մեր լեզուի աւելի հմտագունից սրբագրութեանն ենթարկել կարեւոր կը համարէր. և այս ալ մի'ւս վախճան մ'էր այդ ճանապարհորդութեան: Ասոնցմէ զատ, իր ժամանակին Գաղղիոյ կառավարութեան քաղաքագիտութիւնը դարերէ ի վեր արեւելից մէջ ստացած և պահպանած ազդեցութիւնն ալ աւելի ամրապնդելու և արդիւնաւոր ընելու դիտմամբ՝ հայկական լեզուի ուսման մասնաւոր աթոռ մը կ'ուզէր հաստատել ի մայրաքաղաքին. և զԼուստէ ղրկելով յիտալիա և ի Վենետիկ, կը փափաքէր այդ մտածութիւնը ի գործ դնելու և դիւրացընելու միջոցներու վրայ խորհիլ: Սակայն երկրին մեծ յեղափոխութիւնը՝ որ քիչ ատենէն վրայ հասնելով բռնացաւ, այդ մտածութիւնն ալ նաւակոծեց, ինչուան որ յետոյ ուրիշ առթով և կերպով հաստատուեցաւ նոյն ուսումն ի դպրոցի արեւելեան կենդանի լեզուաց:

Մէկուկէս տարի մնաց լուռտէ ի Ս. Ղազար, նոյն միջոցին ուրիշ կարևոր աշխատութեան մ'այ ձեռք զարնելով: Աստուածաշունչ գրոց հայկական թարգմանութեան ընտրութեան վրայ սքանչացած, փափաքեցաւ փոխադրել զայն ի լատին լեզու, հանդերձ բաղդատութեամբ ընդ յունին և եբրայականին, և անցընել ի կարգ տպագրելի բաղմալեզու Սուրբ Գրոց: Գաթրըմէր, գրիչ իր վարուց, և որ տեսած էր զայդ աշխատութիւն, կը վկայէ թէ երեք միածայ հատորք էին, և կը պահուէին ի մասնաւոր գրատան մարգիզ Ֆորթէնի: Այսպիսի կարևոր երկասիրութեան մը սկըզբնաւորութիւնն ըրած էր ի վենետիկ, և յառաջ տարած մինչև ի վախճան թագաւորութեանց գրոց, ինչպէս կը վկայեն ժամանակագիրք մեր. և յետ դարձին ի փարիզ, շարունակելով զայն՝ երկու հատորը աւարտեց. իսկ զերրորդն ի փլորենտիա ի 1792: Այս երեք հատորոց մէջ կը բովանդակուէին ամբողջ պատմականք Գրոց Սրբոց:

Ի դարձին ի փարիզ՝ գաղափարաց մեծ յեղափոխութիւն տեսաւ ի Գաղղիա, գուշակք ապագայ յուզմանց. և զոր առ մերսն գրած թղթոց միոյն մէջ հետեւեալ խօսքերով կ'ակնարկէ. « Լուաւ, կ'ըսէ, Հայրութիւնդ զոր ինչ այժմ չար լինին ի Գաղղիա. ուր եթէ ոչ ողորմեսցէ մեզ Աստուած, ամենայն ինչ ի կորուստ քրիստոնէական հաւատոց սահին օր ըստ օրէ: Ի վաղուց հետէ նոր փիլիսոփայութիւն զօրացաւ, և ի միասին պակասեցաւ. բարեպաշտութիւն առ մեզ: Փիլիսոփայքն՝ ի ձեռն ոմանց չարաչար պաշտօնէից՝ հաւանեցուցին զթագաւորն մեր դարձուցանել ի թագաւորութիւնս ոչ միայն զպրօտեստանդաւ, այլ և զամենայն այլս հերձուածողս: Իսկ արքայ մեր, թէպէտ բարեպաշտ, որչափ կարէ բարեպաշտիլ թագաւոր, բայց գիւրաշարժ է և նուաաս մտք. ուստի հնարիւք հանին ի նմանէ զհրովարտակ, զի առակցեսցին ընդ մեզ ակաթողիկոսք ի թագաւորութեան... Յայսմ ժամանակի թշուառութեանցս սակաւք գտանին ուսումնասէրք »: Ուրիշ նամակի մը մէջ ալ կ'ըսէ. « Ստացայ և աշակերտ հայերէն լեզուի զքահանայ մի, առ ի օգնել թարգմանութեան աստուածաշնչի »:

Ոչ անշան են թուով իր այս հայերէն թղթակցութիւնք ընդ մերսն. և նախագիծ օրինակքն են անշուշտ որոց համար նոյն Գաթրըմէր կ'աւանդէ թէ կը պահուէին ի գրատան փարիզոյ, բայց յետոյ ի նորոգ կարգաւորութեանն անհետ եղած ըլլան, չգիտելով թէ ուր զետեղած է մատենադարանապետն Վան-Պրայէր: — Նամակներէն զատ ձեռուընիս է փոքրիկ քերթուած մը յօրինեալ ի նմանէ ի նուէր հարսանեաց դատեր աղնուական Նանի սեպչոյն վենետիկեցոյ:

Հայկական Բառգրոց (Dictionnaire de la langue arménienne)  
Գրչագիր օրինակը կը պահուի յազգային գրատան ֆարիզու <sup>1</sup> :  
— Մեռաւ Լուստէ ի փլորենտիա, յամի 1799, յ9 մարտի :

\*\*\*

Մի՛ւս այլ աշակերտ վիճակայի ի ֆարիզ եղաւ Պետրոս Տիւֆուր (Du Four), միանձն դոմինիկեան : Իր մէկ լատին նամակէն՝ զոր ուղղած է առ նախահայր Ուխտիս յօգոստոսի 1749 տարւոյն, չգիտնալով իր երջանիկ վախճանը որ հանդիպած էր նոյն տարւոյն ապրիլի 27 ին, հետեւեալ տողերը կը քաղեմք . « Վեց ամէն ի վեր, կ'ըսէ, իմ երեք կրօնակիցներովս՝ Հայկական լեզուի ուսման կը պարապինք, հրահանգուելով ընդ առաջնորդութեամբ մեծարգոյ վիճակաւ քահանայի, արեւելեան դպրութեանց համբաւանուն ուսուցչին, որ թագաւորական մատենադարանին սովէն հայ գրչագիրքն աչքէ անցուց և անոնց համառօտութիւնն շարագրեց : Ընթերցման կերպը և քերականական կանոններն իրմէ ունեւորով, սաղմոսաբանը թարգմանեցինք, որչափ կրնայինք օժանդակիլ Ռիփլայի բառգրոց աղբատութենէն : Ետեւ եղանք ապա Հիթմոյ արքայի մէկ քերթուածը փոխել ի հայէ ի լեզու դաղղիական . և արդէն ի գլուխ հանելով և զայն, մեր եռանդը առ մեծագոյնս թեմակոխել կը համարձակեցընէ :

« Հայ լեզուի ուսմամբ զբաղելնուս պատճառը, լոկ հեռաւոր ժողովրդոց բարբառոյն գիտութեամբ, այլոց առջև ընդունայն համբաւ կամ պարծանք մը ստանալ չէ . այլ հասարակաց օգուտը, ինչպէս պատշաճական է խոհական և կրօնասէր անձանց . վասն զի ասով միայն աշխատութիւննիս արդիւնաւոր կրնայ ըլլալ : Մեր նպատակն է՝ կրօնիւք և մատենագրութեամբ ձեր նշանաւոր ազգը ծանօթացընել Գաղղիացւոց, և իրենց երկասիրութեանց ընտրելագոյն մասունքը, բարոյականին ընտիր վարդապետութիւնքը, ճարտարիտութեան սքանչելի կտորները յեղուլ ի մեր լեզու : Ուստի թախանձանօք կը խնդրենք սր նշանակեա մեզ զանուանս և զվաստակ ձեր ընտիր մատենագրաց . զպատմաբանս, զբանաստեղծս, զաստուածաբանս և զսրբազան ճարտարախօսս . վասն զի ասոնց գրութեանց թարգմանութիւնք մեծապէս օգտակար կըլնան ըլլալ կրօնից և եկեղեցւոյ :

« Ձեր պատմըչաց հայր գիտենք զՄովսէս Խորենացի, որոյ պատմութիւնն արդէն իսկ թարգմանուած է յՈւխտին եղբարց,

<sup>1</sup> Պատմ. հայերէն դպրութեանց. Հատ. Բ. 416 :

բազմարդիւնք և մեծարեալք թէ ձեր ազգէն և թէ յօտար գիտ-  
նականաց. թէպէտ և այս թարգմանութիւն ըստ ամենայնի կա-  
տարեալ չէ, ինչպէս լսեր եմ ի Բաղդասարայ Յովհաննիսեան  
հայազգայ, և որ այս առ ձեզ թղթիս առիթ եղաւ: Ձեր մա-  
տենագիրն խորենացի յիրաւի շատ հին, արժանահաւատ և հա-  
մառօտարան է. և գաղղիական թարգմա- ութիւն մը անտարա-  
կոյս մեծապէս հաճոյ պիտի անցնի Գաղղիացւոց: Եւ թէպէտ  
պատմածներէն շատը սխալ ալ չի համարինք, սակայն չենք ալ  
գիտեր ինչպէս պաշտպանել զմատենագիրն և իր գրութեամբ մեր  
ազգային քննադատից առջև, որք բազում ինչ ի նմա իբրու առաւ-  
պիւական կը մերժեն. օրինակ իմն, Աբգարու ընդ Յիսուսի ու-  
նեցած յարաբերութիւնը. — ունի՞ք արդեօք այնպիսի յիշատա-  
կարաններ կամ արձանագրութիւնք, որովք գիւրութեամբ կա-  
րելի ըլլայ հերքել հակառակորդաց առարկութիւնները,

« Ունինք յարքունի գրատան քաղաքիս Սրբոյ Լուսաւորչի անու-  
նով քսանուիրք ճառք, Յովհաննու Երզնկացոյ ներքողենիւ.  
սակայն կը տարակուսինք անոնց վաւերականութեան վրայ. —  
չոյն տարակոյսն ունինք նաեւ Ս. Գրիգորի վարդապետութիւն  
կոչուած գրութիւն վրայ:

« Շատ ուրախ եղայ տեսնելով ձեր տաղաչափական մատենա-  
գրութիւնքը, որ երբայական ոտանաւորաց նմանութիւնն ունին,  
պահելով միանգամայն իրենց վսեմութիւնն ու փայլը: Կը լսեմ թէ  
ձեր վարդապետաց մին՝ Ս. Թովմայի Ագուինացոյ աստուա-  
ծաբանութեան երկրորդ մասը հայկական ոտանաւորի վերածեր  
է. կը փափաքէի գիտնալ թէ արդեօք աւարտեր է զամբողջն... »:

Այս թուականէն տասը տարի յառաջ (1739) գրուած նամակ  
մ'ալ կը գտնենք՝ մօտերս հրատարակուած « Ս. Երուսաղեմի  
ժամանակագրական պատմութիւն »<sup>1</sup> կոչուած հետաքննութեան  
արժանաւոր երկասիրութեան մէջ: Գրողն է մեծանուն ժիրանա-  
ւորն Ֆլէօրի, ուղղեալ առ Գրիգոր Շղթայակիր պատրիարք Երու-  
սաղեմի, ի լեզու գաղղիական. սակայն ի վերջն կը յաւելու թէ  
« Զայս նամակ ետու թարգմանել ի բարբառ Հայոց, առ ի ցու-  
ցանել ձեզ թէ ծանօթք եմք լեզուին ձերոյ, և ի կիր արկանեմք  
զայն ի գէպս »: Ի հաւաստիս թարգմանչին լեզուին ուղղութեան  
և ի ցոյց ժիրանաւորին ունեցած համարման առ ազգն և մատենա-  
գրութիւն մեր, աւելորդ չենք համարիր հետեւեալ տողերն մէջ բերել.

« Մեծ և զգալի մխիթարութեամբ ընկալայ, Տէր, զնամակն

<sup>1</sup> Երկասիրութիւն Աստուածաբոյ եպիսկոպոսի Տ. Յովհաննէսեանց յառաքե-  
լական ուխտէ Սրբոյ Յակովբեանց, Երուսաղեմ, 1890:

ձեր գրեալ յառաջնումաւոր յունվարի ի սոյն ամի։ Աքանչացայ ի վերայ փայլուն և բազմահանճար բանիցն՝ զոր ընծայէ շքեղ և մեծավայելուչ բարբառն հայկական . . .

« Խնամով պահպանեմք ի փառաւոր գրատան ամենաբարեպաշտ թագաւոր կայսեր մերոյ զբազմաթիւ երեւելի յիշատակարանս առեալ ի ժողովոց, և զգրեանս առաջին եպիսկոպոսաց ձերոց, որ անմահ փառք են եկեղեցւոյն Հայոց » . . .

Հաւանական կ'ենթադրեմք թէ Վիլֆուայի ըլլայ այս թարգմանութիւն, թերեւս և յօրինուած նամակին. թէպէտև նոյն ատեններն, և յառաջ եւս քան զայդ թուական, պակաս չէին նաև Հայ ազգայինք ի մայրաքաղաքին և յայլ քաղաքս Գաղղիոյ, ինչպէս մեր տուած քանի մը տեղեկութիւններէն ալ տեսնուեցաւ։ Ասոնց վրայ աւելցնենք 1683 ին գրուած յիշատակագիր մի. « Ի թուին Հայոց ՌՃԼԲ՝ փետրուար ամսոյ երկու աւուրն՝ ես Բաղիչեցի մահտեսի Շահմուրատ գնացի ի թագաւորանիստ քաղաքն Վերսալիա. տեսայ զթիւթիւնն թովհաննէս վարդապետն, Սիսիանցի Զաքարիա վարդապետն, Հալապցի Ղազարոսի որդի Յովսէփն, Էրզրումցի Յովհաննիսի որդի Գրիգորն, Ղազանճի Մուրատն, Ոսկան վարդապետի քուերորդի Սողոմոնն։ Նաեւ տեսանք Ֆրանցայու թագաւորն, զկիսն, զորդին և զեղբայրն, զեղբօր հարսն և զվէզիրն։ Տեսանք զսէրայներն և զայլ սալթանաթն սէրային. զեղեցիկ շինուածք, ոսկեղէն, արծաթեղէն և ճէվահիրեղէն. ութը կտմար մէկ մէկի վրայ, արծաթեղէն և թուրլու թուրլու ամառաթով։ Եւ մին երկայն սրահ՝ որ է խաղալոյ տեղ, որ կէսն շինած է, և զկէսն նոր կը շինէին, որ վեց միլիոն խարճ կու գնայր, որ իւր զափուն էր, և ամենայն երկրի վերայ մէթ անելու տեղ կար։ Թահմին արաք որ տասնըվեց միլիոնի զարդ կայր », և այլն։

Շարայարեղի

